ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019Թ. ՄԱՐՏԻ 10-ԻՑ 14-Ը ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
   Հակոբ Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Բելգիայի Թագավորություն (Բրյուսել), 2019թ. մարտի 10-ից 14-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   ՀՀ-ԵՄ համագործակցության կոմիտեի ներքո ստեղծված թեմատիկ ենթակոմիտեի համագործակցության շրջանակներում այց Եվրոպական հանձնաժողով:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
   Մասնակցելու ԵՄ Արտաքին գործողության եվրոպական ծառայության ՀՀ-ԵՄ էներգետիկայի, միջուկային անվտանգության, տրանսպորտի և բնապահպանության հարցերով ենթակոմիտեի հերթական հինգերորդ նիստին և ԵՄ Արևելյան գործընկերության «Կապակցվածություն, էներգետիկ արդյունավետություն, շրջակա միջավայր և կլիմայի փոփոխություն» երրորդ պլատֆորմի հերթական հանդիպմանը:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Ենթակոմիտեի նիստին քննարկվեցին էներգետիկայի, շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության, քաղաքացիական պաշտպանության վերաբերյալ հարցեր՝ համաձայն օրակարգի:
   Ներկայացվել են էներգետիկ ոլորտի առաջնահերթությունները և օրենսդրական փոփոխությունները, որոնք ՀՀ կառավարությունը պատրաստվում է նախաձեռնել:

   ԵՄ Արևելյան գործընկերության երրորդ պլատֆորմի հերթական հանդիպման ընթացքում քննարկումներ են տեղի ունեցել ոլորտների քաղաքականության ներդաշնակեցման և փոխադարձ աջակցության մեխանիզմների վերաբերյալ:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Ենթակոմիտեի նիստին պատվիրակության անդամները, ըստ ոլորտների, ներկայացրեցին ունեցած ժամանակահատվածում տեղի ունեցած զարգացումները, այդ թվում նրանց աջակցությամբ կամ մասնակցությամբ ծրագրերի նախաձեռնությունների վերաբերյալ: Քննարկվել են «ՀՀ և ԵՄ միջև

Համապարփակ և ընդլայնված գործընկերության» համաձայնագրի իրականացման հետ կապված հարցերը, երկուստեք պարզաբանումներ են ներկայացվել առանձին կետերի վերաբերյալ:

ԵՄ Արևելյան գործընկերության երրորդ պլատֆորմի հերթական հանդիպմանը ներկայացվել է ԵՄ նոր ռազմավարությունը ածխածնի՝ մինչև 2050թ. չեզոքացման թեմայով, ինչպես նաև քննարկումներ են տեղի ունեցել Փարիզի համաձայնագրով կլիմայի փոփոխության պարտավորությունների կատարելագործման վերաբերյալ:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Ենթակոմիտեի նիստի արդյունքերով ընդունվեց գործառնական եզրակացություններ, որոնցում ընդգրկված կետերի վերաբերյալ կողմերը կփոխանակեն պարբերական տեղեկատվություն՝ ըստ ժամանակացույցի:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Հետամուտ լինել ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացմանը:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ**

15 մարտի 2019թ.